ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2/1

«08» փետրվարի 2022 թվականի գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 14 (տասնչորս) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
11. Հովսեփյան Արգամ Ռադյայի
12. Գալստյան Ասպետ Սաղաթելի
13. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
14. Ձեյնալյան Մասիս Արամայիսի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 1 (մեկ) անդամ՝ Կարեն Բաղդասարյանը: որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 14 (տասնչորս)** անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի 2-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին:**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու և համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 12-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:**
6. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 28-ի N 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:**
7. **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:**
8. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին:**
9. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:**
10. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Վաղատուր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը**

փոխելու և անհատույց սեփականության իրավունքով հողամաս օտարելու մասին:

11. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Ավագանու 2-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝
   1) Աննա Միքայելյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   2) Արման Դալլաքյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   3) Արգամ Հովսեփյան - «Ապրելու երկիր» խմբակցություն,
   4) Մասիս Զեյնալյան - «Ապրելու երկիր» խմբակցություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 238021,7 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 298723,0 հազ. դրամ» բառերով:
2) Որոշման 1-ին կետում կատարել լրացում.
«3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 60701,3 հազ. դրամ»:
3) Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի 2021 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ, 689-րդ, 692-րդ, 693-րդ և 694-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող «ԶԻԼ 130 ԱԲ-40» մակնիշի 338CC61 պետհամարանիշով (թողարկման

տարեթիվը՝ 1988 թվական, հենասարքի համարը՝ 2714050, վերագնահատված (շուկայական) արժեքը՝ 0 դրամ) տրանսպորտային միջոցը անհատույց օգտագործման հանձնել «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին՝ հետագա շահագործման նպատակով:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել ավագանու երեք անդամ
2. Հաստատել հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների անհատական կազմը՝
   1) Նազիկ Բաղդասարյան
   2) Լորա Սիմոնյան
   3) Հայրապետ Հայրապետյան
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատելու մասին» N12-Ա որոշումը:
4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 4-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» N 4-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջները՝ Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՏՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ և ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ և 63-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հիմք ընդունելով ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 1-ի N 2/փ-28 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է***.

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Վաղատուր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն և որպես առաջնահերթ միջոցառում, պաշտպանական կարիքների համար՝ համաձայն N1 և N2 հավելվածների, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2.75226 հեկտար (2 միավոր՝ 2,14924 հա և 0,60302 հա) արոտավայրը (կադաստրային ծածկագիր՝ 09-090-0102-0001-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2. Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված հողամասերը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) օտարել Հայաստանի Հանրապետությանը:
3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի մարտի 10-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 15.00-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____Դավիթ Ղուլունց

_____Արամ Միրզոյան

_____Նազիկ Բաղդասարյան

_____Արագած Ղուկասյան

_____Աննա Միքայելյան

_____Լորա Սիմոնյան

_____Արման Դալլաքյան

_____Վահե Առաքելյան

_____Արշակ Կարապետյան

_____Գևորգ Մարտիրոսյան

_____Արգամ Հովսեփյան

_____Ասպետ Գալստյան

_____Հայրապետ Հայրապետյան

_____Մասիս Ձեյնալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆ**